

այսինքն Պուատրոնին հիւանդութեանը ինչ ըլլալուն վրայ որոշ կարծիք մը չունի . բայց միանգամայն իրեն տազնասլը կը յայտնէ՝ թէ ինչպէս վճռաբար մահտարածամի անուն տրուեր է ան հիւանդութեանը : Բը ժըշկին տարակուսիլը հոս խիստ շատ կը զօրէ , որովհետեւ բժշկութեան արուեստէն հասկըցողը միայն ինքն էր , ու սկիզբէն հիւանդութեն ընթացքը դիտեր էր :

Եւ մենք աս ալ կ'իմացընենք մեր ընթերցողներուն՝ որ եթէ նոյն բժիշկը Պուատրոնին հիւանդանալէն առաջ եղած պարագաները քննէր , և յիշելու ըլլար թէ ուռեցքը անմիջապէս արեւելեան ժանտախտին նշանը չէ , բոլորովին կը փարատէին իրեն տարակոյտները , և ալ չէր երկբայեր Պուատրոնին հիւանդութեան վրայ :

Պարոն Պետանը աս համախան գըրուածքէն ետքը ան նամակն ալ հրատարակեր է , որ մենք հարկ չհամարեցանք թարգմանել : Եւ յուսանք որ աս քաղուածոյ թարգմանութենէս ալ կ'իմանան մերոնք Պարոն Պետանին քաջութիւնը , ու մեր ազգին նաեւ օտարաց առջև պատիւ ընելը . որով թերեւ իրենք ալ քաջալերուին դիտութեանց ու արհեստից մէջ օրէ օր յառաջանալու , մէկ կողմանէ ալ իրենց հանձարը չծածկելու :

Հ . Տ . Թ

ՎԵՐՏԱՌՈՒԹԻՒՆ

ԳԵՐԵՂՄԱՆ ԱՆՅՈՐԴ :

Ե՛րբ անցորդ . այլ ընդ մը և երթիցես ,
Ամենայն ճանապարհ այսր անցէ գրեզ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԶԻԹԵՆԻ :

ԶԻԹԵՆԻՆ հին ատենի խիստ անուանի ծառերէն մէկն է . բանաստեղծները ասոր վրայ երգեր կը շինէին , պատմիչները շատ գովեստներ կը գրէին . շատ պատկերներու ու արձաններու վրայ ասոր տերեւներէն ձեւացուցած պատկերներ կը գտնուին . իսկ ճիւղերը՝ որ խաղաղութեան նշան են , շատ յիշատակարաններու վրայ փորուած կը տեսնուին : Զիթենիին այսչափ յարգի բան ըլլալուն պատճառը ուրիշ բան չէ , բայց եթէ իրեն անոյշ ու յստակ եղը որ իր սլետողներէն կը հանուի :

Հին ատեն միայն ձիթենիէ եղ կը հանէին . պատուոյ համար աս եղը մեռելներու խարուկին վրայ կը սըրուէին , ու Լստուծոյ զոհի տեղ կ'ընծայէին : Ինչպէս հիմա եկեղեցականաց՝ հին ատենն ալ իբրեւ սրբազան կնիք՝ քահանայապետներուն ճակատը ձէթ կը քսէին , նաեւ թագաւորները ձէթով կ'օծէին , ինչպէս նաեւ քաղաքացիներէն շատերը՝ բաղնիքէն ելլալէն ետեւ : Եւ որովհետեւ ձէթին գործածութիւնը խիստ շատ էր , ամէն ջանք կ'ընէին որ ձիթենիի մշակութիւնը շատնայ , ինչուան պարգևներ ալ կուտային՝ ձիթենին աղէկ ու առատ մշակողներուն . և ով որ առանց հրամանի մէկ ձիթենի մը կըտրէր , կը պատժէին :

Հիմա ալ շատ երկիրներ մասնաւոր փոյթ ունին ձիթենիին մեծցընելու , ու իր բերած շահը բաւական յորդորանք է որ ետեւէ ըլլան մարդիկ ու շատցընեն :

Զիթենին Լսիայի բոյս է . առաջ Լսիիկէի տաք ու բարեբեր երկիրներուն մէջ անկուելով խիստ բազմացաւ ,